ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Մեդպրո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Մկրտչյանի,
«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Բաղդասարյանի, ներկայացուցիչ՝ Հ. Բաղդասարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, քիմիական նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝

նաև Ընկերություն) կողմից 24.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 22.07.2020թ. թիվ 1 որոշմամբ «Մեդպրո» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:

2. Պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագլուով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 2-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Քննարկել Ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու հնարավորությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.07.2020թ.-ին:

24.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/86 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

29.07.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Մեդպրո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

31.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 31.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. <u>«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Արփաշատի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտերի հիման վրա 2020 թվականի հուլիսի 22-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, որի համաձայն հաղթող մասնակից է ճանաչվել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Մեդպրո ՍՊԸ-ն:

22.07.2020թին տեղի է ունեցել մրցույթի բացումը:

23.07.2020թ-ին հրապարակվել է անգործության վերաբերյալ ծանուցումը:

Առաջարկվել է անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Մեդպրո» ՍՊԸ-ի հետ:

2-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի անվանումն է «Կարտրիջ BG8»:

«Կարտրիջ BG8»-ը հանդիսանում է բժշկական նշանակության ապրանք:

«Կարտրիջ BG8»-ը նախատեսված է հիվանդների արյան մեջ էլեկտրոլիտների և գազերի pH, pC02, p02, Na+, K+, C1-, Ca++, Hct որոշման համար: Այս մասին նշված է ապրանքի տեխնիկական անձնագրում, որը կցված է բողոքարկման փաստաթղթերին:

«Կարտրիջ BG8»-ի արժեքը, որը հանդիսանում է բժշկական նշանակության սարքանք, ըստ հստակային օրենսգրքի, ազատված է Ավելացված արժեքի հարկից (հիմք. ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ, 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1317-Ն ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ, 6-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2017 թվականի

հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման

5. Բժշկական տեխնիկա են համարվում՝

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

Սակայն, «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում 2-րդ չափաբաժնի մասով, որը հանդիսանում է բժշկական նշանակության ապրանք («Կարտրիջ BG8»), տեղի է ունեցել օրենքի խախտում:

Մասնակիցը տվյալ չափաբաժնի համար գին ներկայացնելիս Ավելացված արժեքի հարկ սյունակում հաշվարկել է և ներկայացրել 20% հարկ, մինչդեռ համաձայն «Հավելված N 3 ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման» այն ազատված է ԱԱՀ-ից:

Գնի ներկայացման օրենքի խախտմամբ այս ձևը հնարավորություն է տվե մասնակցին, որպեսզի նրա ռաջարկած «առանց ԱԱՀ-ի արժեքը» ցածր լինի մեր կողմից ներկայացված «ընդհանուր արժեքից», որի արդյունքում նա ճանաչվել է հաղթող մասնակից, չնայած այն հանգամանքին, որ նրա ներկայացրած «ընդհանուր գինը» ավելի բարձր է, քան մեր ներկայացրած «ընդհանուր գինը»:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 22.07.2020թ. թիվ 1 որոշմամբ «Մեդպրո» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:

2. Պարտավորեցնել «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկազյուով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 2-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Քննարկել Ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու հնարավորությունը:

3. <u>«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/11139-2020 գրությամբ դիմել է «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 24.07.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 28.07.2020թ.-ին թիվ 252 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

««Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ն հայտնում է Ձեզ այն մասին, որ տեղեկացվել է 24.07.2020թ-ին «Փինգ Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18 ծածկագրով գնանշման մրցույթի վերաբերյալ ներկայացրել է բողոք: ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18 ծածկագրով գնանշման մրցույթի հանձնաժողովը որոշում է կայացրել, որ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պայմանագրի կնքման գործընթացը կասեցնում է նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Մեդպրո» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Մեդպրո» ՍՊԸ-ն 05.08.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Gnumner.am կայքից տեղեկացել ենք Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն ՍՊԸ կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/86 ծածկագրով բողոքին, որը վերաբերում է ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18 ծածկագրով գնանշման հարցմանը:

Ցանկանում ենք նշել ԱԱՀ ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին կառավարության որոշման այն կետում, որին հղում է անում Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն ՍՊԸ, հստակ նշվում է, որ խոսքը վերաբերում է տեխնիկային և սարքավորումներին, ինչպես նաև նույն որոշման 5-րդ կետում հստակեցվում է թե ինչ է նշանակում տեխնիկա կամ սարքավորում տրմինը, որը կիառվում է տվյալ որոշման մեջ.

- Բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 15.07.2020թ.-ին հայտարարավել է «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որը խմբավորված է 2 (երկու) չափաբաժիններում:

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով երկու ընկերություններ՝ «Մեդպրո» ՍՊԸ-ն և «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 22.07.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվել «Մեդպրո» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

iv. Գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Կարտրիջ արյան անալիզատորի համար EDANI15:

v. Գնման առարկա հանդիսացող 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքի համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է հավելվածը 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որում որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշված է՝ քարտրիջ նախատեսված i15 վերլուծիչի համար:

vi. Գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքը մատակարարելու համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է ընդհանուր 2 799

600 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 2 333 000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ գնային առաջարկ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 24.07.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2-րդ հավելվածում սահմանվել է, որ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում

արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են,

քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանվել են դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարման, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը, որի 5-րդ կետի համաձայն՝ բժշկական տեխնիկա են համարվում դեղերի պատրաստման, բուժման, ախտորոշիչ հետազոտությունների անցկացման, վերականգնողական բուժման և այլ բնույթի բժշկական օգնության ու սպասարկման ծառայություններ իրականացնելու համար անհրաժեշտ բժշկական հատուկ և օժանդակ ապարատները, գործիքները, տրանսպորտային միջոցները, սարքերը և այլ սարքավորում:

Նույն հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝ ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով 15.07.2020թ.-ին հայտարարված «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած թվով երկու՝ «Մեդպրո» ՍՊԸ և «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ, ընկերություններից՝ «Մեդպրո» ՍՊԸ-ն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից:

Գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ Կարտրիջ արյան անալիզատորի համար EDANI15:

Գնման առարկա հանդիսացող 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքի համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է հավելվածը 1.1-ը՝ առաջարկվող

ապրանքի ամբողջական նկարագիրը, որում որպես ապրանքի տեխնիկական բնութագիր նշված է՝ քարտրիջ նախատեսված i15 վերլուծիչի համար:

Գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանք մատակարարելու համար «Մեդպրո» ՍՊԸ-ն ներկայացրել է ընդհանուր 2 799 600 ՀՀ դրամ գումար՝ ԱԱՀ-ն ներառյալ և 2 333 000 ՀՀ դրամ գումար՝ առանց ԱԱՀ գնային առաջարկ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը համապատասխանում է հրավերի պահանջներին՝ գնային առաջարկի 4-րդ սյունակում ԱԱՀ-ն ենթակա էր նշման, քանի որ գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքը, ՀՀ կառավարության 05.10.2017թ.-ի թիվ 1317-Ն որոշման 3-րդ հավելվածով սահմանված դրույթների իմաստով չի համարվում բժշկական տեխնիկա: Ընդ որում, պետք է փաստել, որ այն նախատեսված է որպես բժշկական տեխնիկա համարվող «EDAN i15» մոդելի արյան անալիզատորի աշխատանքի ապահովման համար: Այլ կերպ ասած՝ բժշկական տեխնիկա համարվող սարքավորման բնականոն աշխատանքն ապահովելու համար, տեխնիկական կամ օժանդակ մաս կազմող առարկան չի կարող իրականության մեջ վերցվել որպես ինքնուրույն՝ առանձին սարքավորում և համարվել բժշկական տեխնիկա:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել Պատվիրատուի կողմից Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթների խախտած լինելու փաստի վերաբերյալ վերաբերելի և թույլատրելի ապացույց: Այն, որ ընթացակարգի գնման առարկայի 2-րդ չափաբաժնում ընդգրկված «Կարտրիջ BG8» ապրանքը հանդիսանում է բժշկական տեխնիկա և որ «Մեդպրո» ՍՊԸ-ն գնային առաջարկ պետք է ներկայացներ առանց ԱԱՀ-ի նշմամբ:

Անդրադառնալով գործով Ընկերության կողմից բողոքին կից ներկայացված «տեխնիկական անձնագիր» վերնագրված փաստաթղթին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այն նույնպես չի կարող գնահատվել որպես վերաբերելի ու թույլատրելի ապացույց, քանի որ այդ փաստաթղթից որևիցե ձևով հասկանալի չէ, թե այն ի՞նչ ապրանքի վերաբերյալ է, փաստաթղթի բովանդակությունից պարզ է միայն որ այն վերաբերելի է ինչ-որ կարտրիջի, սակայն դրանով հնարավոր չէ փաստել, որ ներկայացված՝ «տեխնիկական անձնագիր» վերնագրված փաստաթուղթը «Կարտրիջ BG8» ապրանքի վերաբերյալ է:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ, ուստի և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 24.07.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/86 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**